ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1955 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Աբր. Գրիգորյան

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈԶԱԻԿ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ

Վերջին տարիներս Սովետական Միության մեջ խոշոր հետաքրքրություն է առաջացել մոզաիկ նկարչության նկատմամբ։ ՍՍՌՄ Գեղարվեստի ակադեմիայում հիմնվել է մոզաիկ արվեստի ամբիոն՝ համապատասխան կադրեր պատրաստելու նպատակով։ Մոսկվայի, ինչպես նաև Սովետական Միության մյուս մեծ քաղաքներում կառուցվող հոյակապ շենքերը զարդարվում են մոզաիկ պատկերներով։ Մոսկվայի մետրոպոլիտենի Մայակովսկու անվան կայարանի առաստաղը, Մոսկվայի պիոներների պալատի և Կիևի կայարանի առաստաղները, Սովետական Միության հսկայական մոզաիկ քարտեզը սովետական մոզաիկայի լավագույն նվաճումներն են հանդիսանում։

Մեզ մոտ՝ Երևանում ևս, որտեղ կառուցվել և կառուցվում են բազմաթիվ հոյակապ շենքեր, խոշոր հետաքրքրություն է նկատվում մոզաիկայի նկատմամբ։ Հայաստանի վերակառուցվող մայրաքաղաքի նոր պլանով նախատեսված է մոզաիկ պատկերներով զարդարել Մատենադարանը, Հաղթանակի մոնումենտի ներքին սենյակները և Լենինի հրապարակի հատակը։

Մոզաիկ նկարչության շուրջը եղած լայն հետաքրքրությունը և 1953 թ. հոկտեմբերի 29-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հնագիտական արշավախմբի կողմից (արշավախմբի ղեկավար՝ պատմ. գիտությունների թեկնածու Բ. Ն. Առաքելյան) Գառնիի հեթանոսական տաճարում երևան հանված հազվագյուտ մոզաիկ հատականկարը առիթ հանդիսացավ ուսումնասիրելու Հայաստանում և մեր հայրենիքից դուրս հայտաբերված հայկական հին ու նոր մոզաիկները, նպատակ ունենալով համառոտակի նկարագրել դրանք, ցույց տալ նրանց գտնված վայրը, կերտման ժամանակաշրջանը, այլ խոսքով ի մի հավաքել հայկական մոզաիկ նկարչության նյութերը։

Գառնիի մոզաիկան.— *Գառնիի նորահայտ մոզաիկան, որի վերարտադրությունը մեծադիր կտավի վրա գտնվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում, ամենահինն է և ամբողջականը Հայաստանում մինչև այժմ հայտաբերված մոզաիկներից (2,9 × 2,9)։ Նա հայ հեթանոսական դարաշրջանի արվեստի միակ ժառանգությունն է, մինչդեռ մյուս մոզաիկները քրիստոնեական շրջանի ստեղծագործություններ են։*

Հայաստանի այս նշանավոր մոզաիկան պատկանում է համաշխարհային հնագույն նկարչական գործերի թվին, որովհետև նա հատականկար է, մի երևույթ, որ գոյություն է ունեցել մեհյաններում, հեթանոսական տաճարներում, մինչդեռ քրիստոնեական եկեղեցիներում այն որմնանկարի է փոխված։ Մյուս առանձնահատկությունն այն է, որ Գառնիի մոզաիկան կերտված է խիտ ագուցված բազմաթիվ, գույնզգույն քարերից, որը նույնպես հեթանոսական մոզաիկ նկարչության հատկանշական կողմն է։

Գառնիի մոզաիկ հատականկարը կերտված է 15 գույնի մանր խճաքարերից։ Նա ունի զանազան պատկերներ, որոնք երևում են ծովի կանաչավուն ֆոնի վրա։ Այստեղ տեսնում ենք զանազան աստվածություններ, ձկներ և հունարեն արձանագրություններ։ Աստվածները մարդու տեսք ունեն կիսով չափ, ոտքերը նման են ձիու ոտքերին, ձկան երկար մարմնով։ Դրանք ձիու և ձկան կերպարանքով մարդիկ են։ Հատականկարի կենտրոնում կա տղամարդու և կնոջ նկար։ Տղամարդու պատկերը խիստ վնասված է և գլխի մոտ գրված է մի բառ՝ «օվկիանոս», իսկ կնոջ նկարը լավ պահպանված է մակագրության հետ միասին՝ «Տալասա» (ծով)։ Հատականկարում կա երկու ձկնորս, որոնցից մեկը, կանգնած նավի ծայրին, ծովից դուրս է քաշում ձկներով լեցուն ուռկանը։ Մյուս ձկնորսը, որ նստած է ժայռի վրա, կարթով ձուկ է որսում։ Մոզաիկ հատակի կենտրոնում կերտված տղամարդու և կնոջ նկարները գտնվում են բազմագույն, հյուսածո շատ գեղեցիկ շրջանակի մեջ։ Հատականկարը պատրաստված է շատ մանր քարերից։ Յուրաքանչյուր խորանարդ մետրի վրա կա մոտավորապես 35—40 հազար քար։ Մոզաիկայում պատկերված իխտիոկենտրավորների ձկնակերպ մարմնի վրա նստած դիրքով պատկերված են ծովային հավերժահարսեր։

Գառնիի նորահայտ մոզաիկան համաշխարհային նշանակություն ունի։

Դվինի մոզաիկան.— Դվինը հանդիսացել է ֆեոդալական Հայաստանի գլխավոր կուլտուրական օջախներից մեկը։ Պատմության ասպարեզում նա խոշոր դեր է կատարել։

1899 թ. ռուսական կայսերական հնագիտական հանձնաժողովի հաշվետվության մեջ տպված են հետախուզական պեղումների նյութերը Դվինի մասին։ 1907 թ. Դվինում պեղումներ է կատարել Խաչիկ Դադյանը և իր պեղումների արդյունքները տպագրել է «Արարատ» ամսագրում [1]։

Դվինի ուսումնասիրությունը, սակայն, գիտական հողի վրա դրվեց և լայն ծավալ ստացավ 1937 թվականից հետո, երբ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալը ձեռնամուխ եղավ Դվինի սիստեմատիկ պեղումներին, որը խոշոր հետաքրքրություն առաջացրեց գիտական շրջաններում։ Դվինին նվիրված հոդվածների և աշխատությունների մեջ գրեթե ոչինչ չի ասված մոզաիկ նկարչության մասին։ Միայն ընկ. Բ. Առաքելյանը, իր «Հայկական պատկերաքանդակները» գրքում տալով 4—7-րդ դարերում հայկական պատերաքանդակների նկարագրությունը, նրանց էությունը, սոցիալական նշանակությունը, տեղն ու դերը հայկական կուլտուրայի ասպարեզում, համառոտակի նշել է նաև հայկական մոզաիկ նկարչության մասին [2]։

Նկարագրելով Դվինի սբ. Գրիգոր կաթողիկե եկեղեցու պեղումը, Խ. Դադյանը խոսում է տիրամոր մոզաիկ նկարի մասին և հիշատակում է սբ. Գրիգոր եկեղեցու մոզաիկ հատակի և առաստաղի առկայության փաստը։ «...Դունայ կաթողիկեի թե՛ հատակը և թե՛ առաստաղը մոզաիկներով զարդարված է եղել, գրում է նա։— Հյուսիս-արևելյան փոքր սեղանի հատակի վրա մնացել է, բախտի բերմամբ, Դունայ աստվածամոր գլուխը. ձախ աչքի մոզաիկները թափված, երեսի, բերանի մասը նույնպես։ Հատակի վրա արևմտյան և հարավային դռների կողմից բավական տարածությամբ մոզաիկ հատակ կանաղան

[1] Տես «Արարատ», 1907, էջ 659։

[2] Տես Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դարերում, Երևան, 1949, էջ 19։

գույնզգույն քարերով, գորգաձև բռնվածքով։ Տաճարի պատերի ծեփերը նույնպես զանազան գույներով ներկած, ինչպես Զվարթնոց եկեղեցում։ Թե՛ հատակի և առաստաղի մոզաիկաներից նույնպես և պատերի ծեփերի ներկած կտորներից բավական քանակությամբ ժողովածու ունեմ ապակեծածկ դարակներում դասավորված»[1]։

Թե՛ անցյալում և թե՛ ներկայումս կատարված պեղումները չեն հայտնաբերել մոզաիկ պատկերներ եկեղեցիներում, բացի Դվինի սբ. Գրիգոր եկեղեցուց։ Այս փաստը, թերևս, վկայում է այն մասին, որ մոզաիկան, որպես արվեստի թանկարժեք գործ, միայն կիրառվել է քաղաքի ամենահոյակապ հուշարձանում՝ սբ. Գրիգոր եկեղեցում։ Մինչև այժմ մոզաիկ նկար չի հայտնաբերված նույնիսկ կաթողիկոսի պալատում, որ հանդիսանում է Դվինի աշխարհիկ ճարտարապետության մոնումենտալ հուշարձանը։

Սբ. Գրիգոր եկեղեցում գտնված աստվածամոր մոզաիկ նկարի մասին եղած հաղորդման մեջ կան ավելի մանրամասնություններ։ Աստվածամոր մոզաիկան գտնվել է այդ եկեղեցու հյուսիսային կողմի բեմի վրա, մոտ երկու արշին հողի խորության մեջ։ Ամբողջական է մնացել դեմքի կես մասը և աջ աչքն ամբողջապես, ինչպես նաև աջ այտի կեսը, ճակատը՝ մազերի հյուսվածքով և նիմբուսը։ Ձախ կողմից նկատվում են բացված ծաղիկներ։ Այդ մոզաիկան կերտված է եղել գույնզգույն քարերից և ոչ թե ապակիներից, ինչպես Զվարթնոց եկեղեցում գտնված խաչը։ Գույնզգույն քարերից մեծերը մոտավորապես տասը կոպեկանոցի մեծություն են ունեցել։ Նրբություն արտահայտող մասերի, ինչպես աչքի և այտի քարերը ավելի մանր են։ Նիմբուսը կերտված է սև քարերից, մազերի կտրվածքը բաց գույնի, աչքը մուգ-շագանակագույն, կոպերը, ինչպես և բիբը՝ ավելի ցայտուն սևագույն քարերից։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պետական պատմական թանգարանի կողմից 1951 թվականին Դվինի կաթողիկե եկեղեցում կատարված պեղումները ցույց են տվել, որ դա մեհյան է եղել, բայց Հայաստանում քրիստոնեական կրոնն ընդունվելուց հետո վեր է ածվել եկեղեցու[2]։ Այդ եկեղեցումն է վերոհիշյալ ուշագրավ մոզաիկան, որը հանդիսանում է քրիստոնեական շրջանի ամենահին մոզաիկան։ Գույնզգույն խորանարդաձև խճաքարերից կերտված, երկրաչափական ձևեր և մեկ քառ. սանտիմետրից ավելի մակերես ունեցող այդ մոզաիկան տեղում մեզ չհաջողվեց տեսնել, որովհետև այն խնամքով ծածկված էր հողով՝ հետագայում Երևան տեղափոխելու համար։ Սակայն Դվինում (Հնաբերդում) կազմակերպված թանգարանում մենք ուշի-ուշով դիտեցինք այդ մոզաիկայի գունավոր վերարտադրությունը։

Նորահայտ մոզաիկ հատակը գտնվում է եղեկեցու արևմտյան մասում և պատկանում է եռաթև բազիլիկ տաճարին, հետևաբար այդ մոզաիկան, ինչպես հաստատում է հնագետ-պատմաբան Կ. Ղաֆադարյանը, 5-րդ դարի գործ է և «վերաբերում է կամ 450 թվականի, կամ Վահան Մամիկոնյանի 460-ական թվականների կատարած նորոգության»։

Հայկական մոզաիկ նկարչությունը բյուզանդական կամ այլ երկրյա ծագում չունի, ինչպես ակնարկում են եվրոպական մի քանի բուրժուական արվեստագետներ (Շառլ Տիլ, պրոֆ. Ստրժիգովսկի)։

---

[1] «Արարատ», Էջմիածին, 1907, հուլիս—օգոստոս, էջ 659—661։

[2] Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 9, 1951, էջ 71—83, Կ. Ղաֆադարյանի հոդվածը։

Դվինի նորահայտ մոզաիկաները քրիստոնեական Հայաստանի հնագույն մոզաիկաներն են։ Այս բանն ապացուցում են ոչ միայն պատմական-հնագիտական նորագույն տվյալները, այլև հենց այդ մոզաիկաների շինանյութերն ու ձևերը։ Դվինի մոզաիկաները կերտված են նախ բնական քարի խորանարդիկներից և ապա միայն միաչափ քառանկյունի ձևեր են, հատկապես հատականկարները։ Մոզաիկայի պատմությունից մեզ հայտնի է, որ այդ արվեստի սկզբնական շրջանում, որպես շինանյութ կիրառվել են գույնզգույն բնական քարերը, իսկ ավելի ուշ քարերի փոխարեն կիրառվել է ապակին, ինչպես այդ տեսնում ենք Զվարթնոց եկեղեցում գտնված խաչի կառուցվածքից, որ ավելի ուշ շրջանի գործ է։

Դվինի կաթողիկե եկեղեցու կառուցման ժամանակի, ոճի և կրած փոփոխություններին նվիրված հոդվածում Կ. Ղաֆադարյանը հետաքրքիր տեղեկություններ է տալիս նորահայտ մոզաիկ հատականկարի մասին։ «Բազիլիկ տաճարի երկրորդ հատակը նշանավոր է նրանով,— գրում է նա,— որ ծածկված է բնական քարերից կազմված խճանկարով, որի հետքերը բացվել էին դեռևս 1938 թվականին, իսկ 1951 թ. այն մեծ ծավալով հայտնաբերվեց եկեղեցու արևմտյան մասում՝ իր բուն տեղում։ Դեռ եկեղեցու կանգուն ժամանակ, երբ նորոգել են եկեղեցին, խճանկար հատակի երեսը ծածկել են կրաշաղախի թանձր շերտով, ուստի և այժմ խիստ դժվար է բաց անել նրա երեսը, որովհետև խճանկարի հատիկները վերին կրաշաղախին ավելի են կպած, քան թե տակի շերտին։ Մոզաիկ հատակը շինելու համար նրա տակ լցրել են մի շերտ քար և այդ շերտի երեսին, կրաշաղախի վրա, մեկ քառ. սանտիմետրից ավելի մակերես ունեցող գույնզգույն խորանարդաձև խճաքարերը դասավորել են զեղեցիկ երկրաչափական ձևերով»[1]։

Այսպիսով, Դվինում հայտնաբերվել է երեք մոզաիկանկար,— հատակը, առաստաղը և Տիրամոր պատկերը։ Վերջինս հայտնաբերել է Խ. Դադյանը դեռևս 1907 թ., սակայն այն մեր ձեռքը չի հասել։ Այդ մոզաիկան հայտնաբերվել է 7-րդ դարում շինած աբսիդի վրա։

Զվարթնոցի մոզաիկան.— Դվինից հետո, հայկական մոզաիկա հայտնաբերվել է հին հայկական ճարտարապետության մեծագույն հուշարձաններից մեկը հանդիսացող Զվարթնոցում։

Զվարթնոցի կառուցումն սկսվել է 645—8 թվականից հետո և շարունակվել է մինչև Բյուզանդիայի Կոստանդին կայսեր Դվին գալը։ Կայսեր հետ միասին 649 թվականին Ներսես Գ. Տայեցի կաթողիկոսը հեռացել և բացակայել է վեց տարի, որից հետո վերադառնալով «հաստատեցավ յաթոռ կաթողիկոսութիւն, փութայր կատարել զշինուած եկեղեցվոյն՝ զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքի»[2]։

Գրավոր հին աղբյուրներում, Զվարթնոցում մոզաիկայի առկայության մասին առաջին անգամ հիշատակում է 10-րդ դարի արաբ մատենագիր Ալ. Մուկադդասին։ Այդ մասին նա գրել է հետևյալը.

«Դաբիլից (Դվինից) երեք փարսախ հեռավորության վրա գտնվում է սպիտակ, տաշած քարերից շինած ութը սյուների վրա (նստած) գմբեթաձև գլխարկի նմանող մի եկեղեցի, որի մեջ գտնվում է Մարիամ կույսի նկարը։ Որ

---

1 Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, № 9, 1951, էջ 78—79։
2 Սեբեոս, ԼԸ, 253։

դռնից էլ (ներս) մտնես (եկեղեցի), դու կտեսնես Մարիամ կույսի պատկերը»[1]։

Հայկական դրավոր սկզբնաղբյուրներում մենք ոչ մի հիշատակության չենք հանդիպում։ Մոտ մի հազարամյակ լռության վարագույր է իջնում Զվարթնոցի մոզաիկաների գոյության վրա, մինչև որ հնագետի բահն ու բրիչը գետնի տակից լույս աշխարհ են հանում հայկական հին ճարտարապետության հոյակապ այդ կոթողի իրական կառուցվածքը և նրա մեջ գտնված մոզաիկ բեկորները։

Զվարթնոցի պեղումները սկզբում կատարվել են անկազմակերպ, տարերային ձևով, ոչ-գիտական հիմունքներով, դրա համար էլ ոչնչացել է եկեղեցու սեղանի մոզաիկապատ կիսաբոլորակ հատակը։ Վերջինիս թեկուզ աննշան նկարագրությունը չենք գտնում Խ. Դադյանի հոդվածում, որը նա տպագրել է Էջմիածնի «Արարատ» ամսագրում։

Պեղումները ցույց են տալիս, որ Զվարթնոցն ունեցել է մոզաիկ զարդարանքներ։

Ներկայումս Զվարթնոցի թանգարանում (1937 թվականից) ցուցադրված իրերի մեջ կան մի շարք ճարտարապետական բեկորներ, մոզաիկի և որմնանկարների ֆրագմենտներ, սմալտաներ (մոզաիկների գույնզգույն խորանարդիկներ)[2], գույնզգույն ջնարակով պատած կավե ամաններ, կարասներ, ծեփվածքի կտորներ և այլն։

Խաչիկ Դադյանի պեղումների ժամանակ գտնվել է մի մեծ խաչի բեկոր, որ արժանի է լուրջ ուշադրության։ «Ավերակների տակից,— գրում է Մեսրոպ վարդապետը,— սեղանի մասում գտնվել է մի մեծ կտոր մոզաիկ, մոտավորապես 60—37 սմ մեծությամբ, որ ներկայացնում է մեծ խաչի բեկոր։ Հավանական է, որ նա ընկել է սեղանի կիսաբոլորակ ծածկից։ Մոզաիկ զարդերը պետք է, որ ընդարձակ տարածություն բռնած լինեն, որովհետև բացի այդ մեծ կտորից, փոքրիկ բեկորներով և հատ-հատ գույնզգույն քարերով լիքն են ավազը և խիճերը։ Խաչիկ վարդապետի կարգադրությամբ երկար ժամանակ մի մշակ զբաղված էր հատկապես այս քարերը ժողովելով։ Փոքրիկ քառակուսի քարերը կամ սեփական գույն ունեն, կամ ներկված են միայն դրսի երևացող կողմից»[3]։

Այս նկարագրությունից հատկապես կարելի է եզրակացնել երկու բան. նախ, որ Զվարթնոց եկեղեցում գոյություն է ունեցել մեծ մոզաիկ խաչ և երկրորդ՝ եկեղեցու սեղանի կիսաբոլորակ հատակը մոզաիկապատ է եղել։ Հենց այն հանգամանքը, որ մոզաիկ բեկորներով և հատ-հատ գույնզգույն քարերով լիքն են եղել ավազն ու խիճերը, որի հետևանքով մի մարդ զբաղվել է այդ մոզաիկ քարերի հավաքմամբ, ցույց է տալիս, որ Զվարթնոց եկեղեցին ունեցել է հարուստ մոզաիկա։ Այնուհետև պարզվում է, որ գտնված մոզաիկ խաչի թևերը ոսկեգույն են, վեց շարքով և եզերված մի շարք կարմիր քարով։

---

[1] *Ал. Мукаддаси*, „Ахсану-т-текасими фи марифати-л-акалим", Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Выпуск XXXVIII, Тбилиси, 1908, стр. 16.

[2] Վ. Հարությունյան. *Զվարթնոց, Երևան, 1947, էջ 19։*

[3] Մեսրոպ վարդապետ. *Էջմիածին և հայոց հնագույն եկեղեցիները, Էջմիածին, պրակ Ա, էջ 55—56։*

ճաճանչները սպիտակ գույն ունեն, իսկ խաչի թևերի և ճաճանչների միջև եղած տարածությունը լցված է շրջանաձև արծաթե գորշ և կապույտ շերտերով։

Ահա այն ամենը, ինչ կարող ենք ասել Զվարթնոցի մոզաիկայի մասին։ Ե՞րբ են ստեղծագործվել այդ մոզաիկաները, ո՞վ է եղել մոզաիկ մեծ խաչի նկարիչը, ո՞ւմ գործերն են մոզաիկ զարդերը և հատականկարը Զվարթնոցում, այս մասին անհնար է որևէ բան ասել։ Մի բան կարելի է միայն հաստատապես պնդել, որ եթե Զվարթնոցը կառուցվել է 641—661 թվականներին,— իսկ սա պատմական փաստ է — ապա այդ եկեղեցում մոզաիկան ստեղծվել է շինարարության ավարտումից անմիջապես հետո, հավանաբար 660-ական թվականներին։ Շենքի ավարտմանը անմիջապես կամ որոշ ուշացումից հետո հետևում են ներքին կահավորման, քանդակազարդման, գեղարվեստական աշխատանքները։

Երուսաղեմի մոզաիկաները.— Հայկական մոզաիկաներ հայտնաբերվել են նաև Հայաստանից դուրս՝ Երուսաղեմում, Կ. Պոլսում և այլ վայրերում։

Մինչև այժմ Երուսաղեմում երևան է հանվել հայկական հինգ մոզաիկ։ Զիթենյաց լեռան վրա, երբ ռուսները նոր եկեղեցի էին կառուցում, 1872 թվականին գտնվեց մի այր՝ ինը գերեզմաններով, որոնց կափարիչները զարդարված էին մոզաիկներով և կրում էին երեք հայերեն անուն, մեկը՝ «Ջոջիկ» երկրորդը՝ «Շուշան», իսկ երրորդը՝ «Մարին»։

Հայ ականավոր մանկավարժ և մանկական գրող Ղազ. Աղայանը, որ այցելել է Երուսաղեմը, իր հիշողությունների մեջ այս մոզաիկաների մասին գրում է հետևյալը.

«... Ես մի հրաշալի արձանագրություն տեսա Երուսաղեմ Զիթենյաց լեռան վրա։ Այստեղ ռուսաց եկեղեցու հիմքը փորելիս մի քանի տարի առաջ գետնի տակից երևացել է մի մոզաիկազարդ գերեզման՝ անեղծ և անարատ, վրան գրված է մեսրոպյան տառերով՝ «Այս գիր է Շուշանկա մաւրն Արտավանա. Հոռի ԺԸ», Սրա վրա ռուսները մատուռ են շինել և պահպանում են առանձին խնամքով։ Երուսաղեմի հանգուցյալ պատրիարք Եսային էլ նույն գերեզմանի պատկերը իսկականի մեծությամբ և զարդարանքով նկարել է տվել և կախել պատրիարքարանում։ Նույն գերեզմանից մի քանի քայլ հեռու դեպի արևելք դարձյալ գետնի տակ երևացել են երկու կարգ գերեզմաններ հայ իշխանների ու տիկինների։ Սրանցից երկուսն են և՛ նշանավոր և՛ զարմանալի։ Մեկի վրա գրված է եղել Շուշանիկ, իսկ մյուսին՝ Ջոջիկ»[1]։

Ինչպես հայտնի է, մի քանի մոզաիկաների, հատկապես հատականկարի պատկանելությունը սկզբում վեճի առարկա դարձավ մի քանի ազգությունների կողմից։ Սակայն հայերեն արձանագրության առկայությունը ու զարդանկարների հայկական ոճը լուծեցին վեճերը։ Ղ. Աղայանից վերցրած վերոհիշյալ քաղվածքը նոր լույս է սփռում և հաստատում է այդ մոզաիկաների հայկական լինելը։ Քարայրի դռան առջև մի ուրիշ գերեզմանի մոտ հայտնաբերվեց մի այլ մոզաիկանկար, որ ուներ հետևյալ հայերեն արձանագրությունը։

«Բարեխաւս ունելով առ աստուած, (զսուրբ Եսայի և զերանելի) հարսս եւ Վաղան արարի վասն (թողութիւն մեղաց ղյիշատակարանս ղայս)։

Դամբարանների վերևի կողմը գտնվեց մի սրահ շքեղ մոզաիկ հատականկարով՝ հետևյալ հայերեն արձանագրությամբ՝

[1] Ղ. Աղայան, Երկեր, հատ. 4, Երևան, 1950, էջ 360 - 361։

«Այս գիր է Երանելւո Շուշանկա մաւրն Արտավանայ Հոռի ԺԱ»։ Սա հավանաբար մի հայ իշխանուհու դամբարան է։ Նույն սրահի մի ուրիշ տեղ հայտնաբերվեց մի ուրիշ մոզաիկա, որի արձանագրության բեկորի վրա գրված էր.

«Վասն աղավթից եւ փրկութեան Թեւայ, Աբասու եւ Մուրկան»։

1892 թվականին գտնվեց Շուշանկա սրահին մոտ մի ուրիշ սրահ, որը նույնպես մոզաիկով էր զարդարված և ուներ հետևյալ արձանագրությունը.

«Այս յիշատակա (րան Տն Յակովբա) որ եղեւ ի ձեռն ին) դրելոյ»։ Սա հավանաբար մի եպիսկոպոսի դամբարան է եղել։

Վերջապես, 1894 թվականին Երուսաղեմի Դամասկոսի դռան մոտ հայտնաբերվեց մոզաիկ արվեստի մի սքանչելի գործ։ Դա մի հատականկար է, որ իսկույն գրավեց արվեստագետների ուշադրությունը։

Երուսաղեմի այս խոշոր մոզաիկ հատականկարի պատկանելությունը սկզբում վեճի առարկա դարձավ, սակայն նկարի ներքև եղած հայերեն արձանագրությունը և զարդանկարների հայկական ոճը լուծեցին վեճերը։

Մենք կանգ կառնենք այս մոզաիկայի նկարագրության վրա։

Երուսաղեմի այս հատականկարը մի որթատունկ է, որ դուրս է գալիս հոյակապ մի թաղարից տարածելով իր ճյուղերն ու ոստերը։ Հատականկարն ունի քառասուներեք բոլորակներ, որոնք կազմում են հորիզոնական ձևով ինը շարք, որից յոթը հինգական և երկուսը՝ չորսական բոլորակ ունեն, կամ ուղղահայաց կարգով հինգ շարք, երկու կողմի չորս շարքերն իննական և միջինը յոթ բոլորակ։

Ուղղահայաց միջին շարքի բոլորակներում նկարված են, վերևից սկսելով 1) մի զույգ աղավնի, դեմ-դեմի թառած որթատունկի մեկ ոստի վրա, 2) մի զամբյուղ լցված կարմիր-դեղնավուն խնձորներով։ 3) մի թութակ վանդակում, 4) մի արծիվ՝ թևերը կիսովին բացած, 5) դատարկ, նրբակերտ մի սափոր, 6) գլխահակ մի բադ, 7) նորից մի զամբյուղ կարմիր խնձորներով լի։ Մյուս 36 բոլորակների մեջ էլ նկարված են այլևայլ դիրքով ցամաքային թռչուններ, ինչպես սիրամարգ, հնդկահավ, ջայլամ, կաքավ, արագիլ, սագ, բադ, փասյան, ուրուր, աքաղաղ, մարի, սարյակ, աղավնի, տատրակ, կաչաղակ, ագռավ և այլն։ Որթատունկի ոստերից կախված են 91 գույնզգույն ողկույզներ, միջանկյալ տերևներով։

Երուսաղեմի մոզաիկ նկարի, որ կոչվում է նաև Դամասկոսի դռան նկար, ամբողջ հատակը բաց-դեղնագույն է, մյուս գույներն են սև, կարմիր, կապույտ, նարնջագույն և մոխրագույն։

Նկարի երկայնքով կողք-կողքի շարված են 527 և լայնությամբ 323 խորանարդ խիճեր, որով ամբողջ քառակուսի հատակը, մի կողմ թողնելով կոնաձև մասը, պարունակում է $527 \times 323 = 170, 221$ այլևայլ բնական գույներով խորանարդ խիճեր։ Այս գումարը խճաքարերի ճիշտ քանակը չի կարող լինել, այլ մոտավոր մի հաշիվ, որովհետև խորանարդիկները համաչափ ծավալ չունեն։

Մոզաիկ հատականկարն ամբողջությամբ վերցրած ներկայացնում է ուղղանկյուն՝ արևելքից արևմուտք ձգված, 7,15 մետր երկարությամբ և 4,40 մետր լայնությամբ։ Մոզաիկան շրջանկարված է 0,26 մետր լայն զամբյուղաձև հյուսված քառակուսի եզերքով։ Հատականկարի ճակատի վերևը, արևելյան կողմը կա կոնաձև մի խորշ, նույնպես մոզաիկ նկարով, որ հարակից մի երկրորդ հատակի մնացորդ մի անկյուն է և ունի 1,07 մետր երկարություն և 0,75

մետր լայնություն։ Ճակատի վրա գտնվող երկու տող հիշատակարանը առնված է 1,07 մետր երկարության և 0,23 մետր լայնության առանձին շրջանակի մեջ և կարդացվում է մեսրոպյան տառերով դրոշմված հետևյալ արձանագրությունը.

Առաջին տող «Վասն յիշատակի և փրկութեան»

Երկրորդ տող «Ամենայն հայոց զօրաց զանուանս տեր գիտե» (Հիշատակին և փրկության համար բոլոր հայ զինվորների, որոնց անուններն Աստվածն է իմանում)։

Մոզաիկ հատականկարի հետ հայտնաբերվեց նաև յոթ կտորի բաժանված գեղաքանդակ մարմարյա մի խաչքար, որի ջարդված բեկորները իրար մոտ բերելով հնարավոր եղավ կարդալ հետևյալ արձանագրությունը.

«Յիշեալ Պետրոս որ արար և Յոհան որ ետ առնել զխաչս զայս»։

Խաչի քանդակն ունի հայկական ոճ, չորս միջանկյունները՝ երկու փոքր խաչ և երկու աստղ։

Մեր ձեռքը հասած և լավ պահպանված Երուսաղեմի Դամասկոսի դռան մոզաիկ հատականկարը արվեստի մի զմայլելի գործ է։ Այս արվեստի մեջ տիրապետող է առաջին հերթին թռչնանկարչությունը և ապա ծաղկանկարչությունը, մի երևույթ, որ մենք տեսնում ենք հին հայկական քանդակագործության մեջ, նույնիսկ հյուսվածեղենի բնագավառում։ Բոլորակների մեջ գտնված ազատ տարածությունը զարդարված է հնգատերև ճյուղերով և խաղողի ողկույզներով։

Ճարտարապետ Թ. Թորամանյանը խոսելով Բագրատունյան շրջանի վերածնության մասին, չափազանց ուշագրավ դիտողություն է անում։ Նա գրում է՝

«... Թռչուններ և կենդանիներ քանդակելու մեջ հայերը ուշագրավ հառաջադիմություն ըրեր էին 5-րդ և 7-րդ դարերու մեջ, սակայն Բագրատունի շրջանի վերածնությունը միանգամայն մոռացության տված էր նախնյաց մշակած այս ճյուղը»[1]։

«Նախնյաց մշակած այս ճյուղը» ահա իր լավագույն արտահայտությունն է գտել Երուսաղեմի մոզաիկ հատականկարում։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ այդ մոզաիկան կերտվել է, հավանաբար 7-րդ դարում։

Հետաքրքրական են Երուսաղեմի մոզաիկաների վրա եղած արձանագրությունները։

Տրդատ Պալյանը իր «Սուրբ Երկիր» խորագրով աշխատության մեջ խոսելով Երուսաղեմի մոզաիկ նկարների մասին, նշում է, որ այդ մոզաիկաների վրա եղած արձանագրությունների ձևը միանման է գրեթե։ Այս բանն ապացուցում է, որ այդ մոզաիկ նկարները ժամանակագրական կարգի տեսակետից իրար մոտիկ ժամանակաշրջանի գործեր են։

Երուսաղեմի մոզաիկ նկարների վրա եղած արձանագրությունների տառաձևերը, ըստ Հ. Վ. Տաշյանի, ցույց են տալիս, որ արձանագրությունները ո՛չ լիովին գլխագիր են և ո՛չ էլ զուտ «միջին» են։ Ավելի «միջին» ձևերով երևում է Նուշանկա արձանագրությունը, որտեղ «մաւրն» բառը պետք է կարդալ «մաւր»։ Այստեղ կա նաև փակագիր. «Այս դիր է» բառերի ր և է տառերը միաձույլ են։ Ա տառը ամենուրեք միևնույն ձևն ունի, այսինքն երկրորդ սյունակի

[1] Թ. Թորամանյան, Անի քաղաք, Թիֆլիս, էջ 124։

ներքնակողմը կա միշտ մի գծիկ, մի տառաձև, որ ոչ միայն ձեռագրերի վրա է երևում, այլ նաև զանազան արձանագրությունների վրա[1]։

Ըստ երևույթին, 5—7-րդ դարերում և թերևս ավելի ուշ եղած արձանագրությունների տառաձևը հիմնականում եղել է գլխագիր — միջին երկաթագիրը։ Սա նույնպես ապացուցում է մասամբ, որ Երուսաղեմի և ընդհանրապես մոզաիկ դամբարանների հայերեն արձանագրությունները Պաղեստինում միանման են եղել և 7-րդ դարի գործ են առավելապես։

Հայտնի է, որ քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն դառնալուց հետո բազմաթիվ հայ ուխտավորներ են այցելել Երուսաղեմ։ Բացի այդ, հայերը Երուսաղեմում կառուցել են վանքեր։ Դրանցից միայն երեքն են հայտնաբերվել և ուշադրության արժանի են իրենց մոզաիկ նկարներով։

Երուսաղեմի մոզաիկաները հանդիսանում են այդ քաղաքն այցելության եկած հայ մոզաիկ նկարիչների գործեր, կամ այնտեղ բնակություն հաստատած արվեստագետների ստեղծագործություններ։

Հայկական մոզաիկաները Կ. Պոլսում.— Բյուզանդիայի մայրաքաղաքը հայտնի է իր մոզաիկաներով։ Պատմական Հայաստանում հայտնաբերված մոզաիկաները որոշակի նմանություն ունեն Երուսաղեմի և Կ. Պոլսի մոզաիկաներին։ Բանասեր Կ. Հ. Բասամջյանն իր աշխատության մեջ, նշելով Կ. Պոլսում հայտնաբերված Դագիկ Արծրունու քանդակի նման մի մոզաիկայի փաստը, գրում է. «...Այս տեսակի արձաններ և պատկերներ հաճախ կտեսնվեին ոչ միայն հայկական հին եկեղեցիներուն վրա, այլև ընդհանրապես բյուզանդական եկեղեցիներու շատերուն վրա, օրինակի համար, Կ. Պոլսո մեջ էտերնե Դափուի մոտ իր բնությամբ ծանոթ Բահրեի մզկիթին,— որ նախկին Խորա անուն հունական վանքին քառասուն վկայից եկեղեցին էր,— խճանկար (mosaique) բազմաթիվ պատկերներեն մին կներկայացնե ճիշտ վերոհիշյալ տեսարանը»[2]։

Հայկական մոզաիկաներ են հայտնաբերված ոչ միայն հայկական, բյուզանդական եկեղեցիներում։ Ուշագրավ են Կ. Պոլսի ս. Սոֆիա մայր եկեղեցում վերջերս երևան հանված երեք մոզաիկ նկարները, որից մեկը որոշակի նմանություն ունի հայոց ս. Գրիգոր հայոց Լուսավորչին, կանգնած դիրքով, հունական հայրապետական հագուստով գլուխը լուսապսակով, ձախ ձեռքում բռնած Ավետարանը։ Արդյոք սա Ասողիկի (էջ 85) նշած «դուռն հայոցը» չէ, թերևս կապ ունի «Գրիգոր Հայաստանի» մոզաիկայի հետ։

Ինչպես հայտնի է, 1453 թ., երբ Մահմետ երկրորդը նվաճեց հին Բյուզանդիոնը և տիրացավ ս. Սոֆիային, նա հրամայեց, որ եկեղեցու մոզաիկ նկարները ծածկեն ծեփով։ Մահմեդական կրոնը չէր հանդուրժում դիմանկարներ (ինչպես մենք այդ տեսնում ենք նաև Երուսաղեմում, Եգիպտոսում և այլն)։ Հուստինիանոսի դարաշրջանի այդ ուշագրավ մոզաիկաները ծածկված մնացին և միայն 1932 թ. հայտնաբերվեցին։

---

[1] Ն. Մառ, Մի տապանաքար յոթնկետից (Սեմիրեչիե) հայերեն-ասորերեն արձանագրությամբ (թարգմ. «Հանդես», 1885, № 2, էջ 33—36)։

[2] Կ. Հ. Բասամջյան, Հայոց հին գեղարվեստի վարպետները, Փարիզ, 1926, էջ 23։